

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հրանտ Թամրազյան, Երկեր, հ. Դ, Երևան, «Նաիրի», 2013, էջ 3-22:

...Ի՞նչ է կատարվել, չգիտեմ, ների՛ր,
Հին մայթերն արդեն մեզ չեն ճանաչում,
Իսկ որբությունն այն անտուն շների
Մեր այս որբության վրա է հաչում...
(Վ. Դավթյան, «Պատանության գիշեր».
Հրանտ Թամրազյանին)

Ներկա հատորը Հրանտ Թամրազյանի «Երկերի» վերջին գիրքն է, ինչ-որ իմաստով՝ ամփոփիչը. այն բազմաթիվ հողված-ուսումնասիրությունների, հուշերի, կենսամատենագրության ու տարաբնույթ այլ նյութերի հետ միասին ներառում է տաղանդաշատ գիտնականի կարևորագույն աշխատություններից երկուսը՝ «Շիրվանզադե»-ն և «Նահապետ Քուչակ»-ը՝ առաջինն ստեղծված վաղ երիտասարդության տարիներին, մյուսը՝ կյանքի վերջին շրջանում... Ուրիշ խոսքով՝ երկու ուսումնասիրությունների միջև ընկած է շուրջ կեսդարյա ճամփաբաժան, և թվում է՝ դրանք անպայմանորեն ինչ-որ չափով պիտի տարբերվեն գեղագիտական հայեցակարգի, արժեքաբանական համակարգի ընկալման ու գնահատման և, ի վերջո, հեղինակային ոճի տեսակետից: Ասում են՝ անպայմանորեն, քանի որ յուրաքանչյուր գիտնական, հատկապես հումանիտար ոլորտի, հասունանում է աստիճանաբար, թրժվում «կյանքի բովում» ու ապրում անխուսափելի զարգացում: Հրանտ Թամրազյանի պարագայում, սակայն, չի գործում քանիցս ապացուցված այդ ճշմարտությունը. նա երջանիկ բացառություն է... Կյանքի ցանկացած շրջանում ստեղծված ցանկացած ուսումնասիրություն իր վրա մշտապես կրում է վիթխարի կենսազգացողության, գեղեցիկի խոր ընկալման, գրական բարձր ճաշակի, գիտական խղճմտանքի ու երկյուղած պատասխանատվության, խորունկ հայացքի և, վերջապես, բացառիկ ոճի դրոշմը, ոճ, որ միայն իրենն է՝ Թամրազյանինը: Դա, եթե կարելի է այսպես ասել, գիտագեղարվեստական մի ուրույն ոճ է՝ «աչքի պես պարզ, աչքի պես բարդ», որը երբեք չի հնանում, և գրականագետի երկերից մեջբերված որոշ հատվածներ այսօր էլ հայ դասական գրողների ընտրանու հետ կողք կողքի զարդարում են մայրենիի ուսուցողական ձեռնարկների էջերը...

Վաղ պատանեկության շրջանում կարդալով Ալեքսանդր Շիրվանզադեի երկերը՝ երագել է ճամփորդել բազմաթիվ երկրներով, ձեռք բերել խոր աշխարհաճանաչողություն ու գեղագիտական բարձր գիտելիքներ և դառնալ նրա պես հանրաճանաչ... Նա անվիճելիորեն ուներ այդ ծիրքը և գուցե կյանքի այլ հանգամանքներում, իսկապես, դառնար հռչակված բանաստեղծ կամ արձակագիր: Դժվար է ասել: Ինչպես հե-

տագայում ինքն է խոստովանել, իր քննադատական գործունեությունն սկսել է ինքնադատությամբ. առաջին անգամ կարդալով Վահան Տերյանի կախարդական բանաստեղծությունները՝ հենց ինքն էլ հերքել է իր գրական անվարժ փորձերը: Ասել է թե՛ ճշմարիտ գեղեցկության նկատմամբ տածած անհուն սերն է ստիպել շնորհալի պատանուն վայր դնել զուտ գեղարվեստագետի գրիչը: Հրանտ Թամրազյանը, այդպիսով, գրող չդարձավ. նրա տարերքն ու կոչումը գրադատությունն էր՝ ոչ պակաս մի բարդ մասնագիտություն, առանց որի երբեք չի կարող լինել ճշմարիտ գրականություն: Անողոր ժամանակի աստիճանական սրբագրման և հավերժի ճանապարհին մեծ գրողները, անշուշտ, շատ ավելի բախտավոր են ու սակավ խոցելի՝ ամենից առաջ իրենց ստեղծած գեղարվեստական բարձրարժեք պատկերների, առեղծվածային գեղեցկությունների, համամարդկային խորհուրդների և յուրաքանչյուր սերնդի առջև բուլրովին մի նոր փայլով անակնկալ բացվելու կարողությամբ, քան իրենց՝ թող որ չափազանց տաղանդավոր գնահատողները: Բայց և այնպես, վերջիններիս աշխատություններում ևս կենդանագրվում են ժամանակի ու սերնդի հոգեկան ներքին կենսագրությունը և գեղագիտական ճաշակը, որոնք, ինչպես հաճախ էր շեշտում գրականագետը, պակաս ուշարժան չեն ու անկրկնելի:

Ակադեմիկոս Արսեն Տերտերյանի արժանավոր ասպիրանտը, տակավին երիտասարդ, 20-րդ դարի կեսերից հայտնվում է գրական կյանքի կենտրոնում: Իսկ ասպարեզում շատերն էին՝ նույնպես շնորհաշատ, նույնպես տաղանդավոր գրականագետներ, որոնք, իրենց ուսերին կրելով նախ՝ ստալինշխնայի, Եղ. Չարենցի խոսքով՝ «արեգնացյալ կացնի» անլուր աղետները, ապա՝ դրանց հաջորդած խրուշչովյան «ծնիալի» ցնծալից հույսերը և հետո՝ բռնատիրական հասարակարգի՝ հաճախ անհեթեթության հասնող պարտադրանքները, յուրաքանչյուրը յուրովի իր նպաստն էր բերում մայրենի գրականագիտությանը, ավելի ճիշտ՝ ստեղծում էր այդ գիտությունը: Դա հայագիտության թերևս ամենածաղկուն շրջանն էր: Ահա նրանք՝ այդ լուսավոր անհատները՝ Մկրտիչ Մկրյան և Արամ Ինճիկյան, Գառնիկ Ստեփանյան և Արամ Ղանալանյան, Էդուարդ Ջրբաշյան և Սուրեն Աղաբաբյան, Պիոն Հակոբյան, Ալբերտ Շարուրյան... Գիտնական վաստակաշատ այս այրերից յուրաքանչյուրը, այսպես ասած, իր բնամարզում էր. ոմանք անձնուրաց նվիրվածությամբ ստեղծում էին հայոց միջնադարյան ու նոր գրականության հնարավորինս հավաստի պատմություն, ոմանք զբաղվում էին գրականության տեսության և ընդհանրապես գեղարվեստական գրականության հարցերով՝ բնավ չզիջելով ժամանակի ռուս նշանավոր գիտնականներին, ոմանք եռանդուն քննադատներ էին՝ կենտրոնացած ժամանակակից գրականության հիմնախնդիրների վրա, իսկ ոմանք էլ աղբյուրագետ-տեքստաբանների բացառիկ ջանադրությամբ տևականորեն հավաքում-համադրում էին բազմաթիվ փաստեր, ճշգրտում

հայ գրողների կենսագրության հայտնի ու անհայտ էջեր, պարզում գրական ամենատարբեր երկերի ստեղծագործական պատմություններ և մեկնում փաստաբուխ առանձնահատկություններ...

Հրանտ Թամրազյանը, սակայն, գրական առաջին իսկ փորձերով տարբերվեց բոլորից, ամենից առաջ՝ հախումն բնավորությամբ, ազնվությամբ, գրական խոտանի հանդեպ ունեցած խոր անհանդուրժողականությամբ և խիզախությամբ: Դա, ինչ խոսք, դժվարագույն գործ էր. փոխվում էր կյանքը, փոխվում էր աշխարհը, ի վերջո, փոխվում էին մարդիկ ու հարաբերությունները, բայց գրական միտքը շարունակում էր մնալ խորհրդային հնաբույր գաղափարախոսության, զգոն գրաքննության, գռեհիկ սոցիոլոգիզմի կապանքների ու բավական մռայլ ավանդների ճնշման տակ: Տխուր ժառանգություն էր հասել նոր սերնդի գրականագետներին՝ նույնքան տխուր եզրահանգումներով. Ալեքսանդր Շիրվանզադեն հռչակվել էր իբրև խոշոր բուրժուազիայի գաղափարախոս, Րաֆֆին՝ անուղղելի ազգայնամուլ, իսկ Հովհաննես Թումանյանը՝ նահապետական կենցաղի երգիչ, Սիամանթոն ներկայացվել էր գրեթե ֆաշիստ, Եղիշե Չարենցը՝ սնամեջ ու քաղաքական շատ սովորական մի ճառախոս... Անցյալ դարի կեսերին անհրաժեշտ էր վերագնահատել հին ու նոր պոեզիան, այսօր արդեն մեզ համար զավեշտալի, բայց ժամանակին գերակայող «կարմիրի», «երկաթի», «տրակտորի», «կոլխոզի» ու «կոմբայնի» գրոհային թեմաները կամ կեղծ ինտերնացիոնալիզմը, որն ուներ ջատագովների հսկա բանակ՝ մի դեպքում հանգապաշտ ապաշնորհներով, մյուս դեպքում՝ գաղափարական խեղկատակներով: Գրաքննադատության ուսերին ընկել էր պարտքի ու արժանավայել գալիքի ծանր բեռը. նորագույն շրջանի գեղարվեստական գրականության հետագա զարգացումը մեծապես կախված էր նոր սերնդի մտածողների հայեցակարգից, աշխատասիրությունից, համարձակությունից ու եռանդից. պետք է մատնանշվեին զարգացման նոր ուղիներ, պետք է փոխվեր շատ բան՝ սկսած գրական թեմաներից ու նյութից մինչև գաղափարագեղագիտական ընկալումներն ու մարմնավորումները: «Իսկ ժամանակը խստիվ արգելում էր գոյություն ունեցող ստերեոտիպից քայլ կատարել հատկապես դեպի աջ, քանզի այնտեղ հոտում էր իզմերի մի հսկայական քանակ, որ առանց երկմտանքի կարող էին զարկել հանդգնողի ճակատին, բացառված էր նաև քայլ կատարել դեպի ձախ, ուր «ձախության մանկական հիվանդությունը» կոլորեր գրիչ բռնողի ձեռքը: Իսկ Հրանտ Թամրազյանը, ի պատիվ իրեն, առաջին եղավ, որ հանդգնեց կատարելու այդ քայլը»¹, - այդ օրերի մասին այսպես է գրում տաղանդավոր արձակագիր Մկրտիչ Սարգսյանը՝ հիշելով ««Խմբապետ Շավարշը» պատմական դարաշրջանի լույսի տակ» հողվածի բա-

¹ Թամրազյան Հր., Հուշերիս հետ, Երևան, «Նաիրի» հրատ., 2002, էջ 65:

ցառիկ արձագանքները, հողված, որը «պայթեց թթվածնավոր ռուսիի նման՝ բացելով շահագրգիռ մարդկանց ոչ միայն աչքերը, այլև շնչառությունը»:

Այսպես, ահա, Յրանտ Թամրազյանը՝ բառիս բուն իմաստով այդ ապստամբ քննադատ-գրականագետը, մի կողմից ակնդետ հետևելով գրական ընթացիկ մտքի շարժմանը, մյուս կողմից՝ արծվենի հայացքը հառած հայրենի հինավուրց մշակույթի աստիճանական զարգացման համապատկերին, անդուլ աշխատասիրությամբ, արտասովոր կենտրոնացմամբ ու հազվագյուտ ձիրքով պեղեց ու հայտնաբերեց թաքնված բազում գաղտնիքներ և հոգևոր գեղեցկություններ՝ սկսած վաղ միջնադարի պատմագրական, իմաստասիրական, քերականական, վարքագրական, ճարտասանական և ընդհանրապես գեղարվեստական երկերի զանազան էջերում սփռված գրական-քննադատական մտքի նմուշներից մինչև նոր ու նորագույն, մինչև ժամանակակից գրական կյանքի հիմնախնդիրները, կամրջեց դարերը և Յրանտ Մաթևոսյանի պատկերավոր խոսքով՝ դարձավ հայ գրական մտքի «իրական տիրակալը»։ «Յիրավի, Յրանտ Թամրազյանը երկիր էր ստեղծել, երկիր էր ստեղծում, որ բնակեցված էր իր նման խիզախ, խելացի ու խելամիտ, իր նման անսեթևեթ ու բարձր մարդկանցով, և իր երկրի սահմանին ինքը կանգնած էր իրական տիրակալի վստահությամբ»²:

Յրանտ Թամրազյանը, անշուշտ, շրջապատված էր արժանավոր գիտնականներով, որոնցից յուրաքանչյուրը, կրկնում են, զբաղված էր հետաքրքրությունների սեփական շրջանակով և հաճախ էր հասնում աննախադեպ հաջողությունների... Նրան, սակայն, հաջողվեց ստեղծել գրականագիտական ի՛ր դպրոցը, որը կենսունակ է նաև այսօր, վստահաբար նույնպիսին կլինի նաև գրականագետ-քննադատների հաջորդ սերունդների համար: Ինչո՞վ. ամենից առաջ՝ թամրազյանական վիթխարի կենսազգացողության, գրական նյութը սանձահարելու վարպետության, գեղարվեստական պատկերի մեջ արտացոլված իրականության ու հոգեբանական ամենանրբին խնդիրների հայտնաբերման, կերպավորման արվեստի ինքնատիպ ու հավաստի արժևորման, խնդրո առարկա գրողի կամ գրական երևույթի գեղագիտական մակարդակին արժանի հայացքի ու գնահատության և, ի վերջո, ինքնօրինակ ոճի ավանդներով: Ժամանակակից գրականագիտությունը, անտարակույս, նոր որոնումների ու խիզախումների մեջ է, փորձում է հետ չմնալ համաշխարհային գիտական մտքի առաջընթացից. մեզանում գրվել ու շարունակվում են ստեղծվել բավական բարձրարժեք ուսումնասիրություններ, այդ թվում՝ նաև պատմահամեմատական, նշանագիտական, տիպաբանական և միֆապոետիկայի զանազան խնդիրներին նվիրված ուշարժան աշխատություններ, ավելի քան երբևէ զգացվում է գրականության տեսության և գրականության պատմության է՛լ ավելի սերտաճման անհրաժեշտություն ու անցյալի գրական բազ-

² Մաթևոսյան Յր., Սպիտակ թղթի առջև, Երևան, «Յայագիտակ» հրատ., 2004, էջ 240:

մաթիվ երևույթների գնահատման մշակութային և արժեքաբանական միանգամայն նոր հայացք: Այդպես է եղել բոլոր ժամանակներում: Բայց և այնպես, Հրանտ Թամրազյանի վաստակը չի հնանում, քանի որ նա գրականագիտությունը բարձրացրեց ճշմարիտ արվեստի մակարդակի, ուր գիտական խիզախումներին, լայնախոհ հայացքին, անակնկալ գյուտերին ու գիտատեսական ծանրակշիռ ընդհանրացումներին այնքան բնականորեն ընդելուզվեցին բանաստեղծական լեզուն և պատկերավոր մտածողությունը: Դա մի արվեստ է, ուր ծանրության կենտրոնը բոլոր դեպքերում հայրենի եզերքի, նրա անվեհեր ու մի շատ ազնիվ սերնդի կենսագրությունն է, կենդանի իրականությունը, մարդկային տանջահար հոգին, և ուր մշտապես գերակայող է, իր խոսքով ասած՝ գրականագետի անդուլ մաքառումը «բարոյական արժեքների և գեղեցկության ակունքների պահպանության համար»...

Չհավակնելով սպառնիչ խոսք ասել Հրանտ Թամրազյանի կյանքի և գիտական վաստակի մասին³ այնուամենայնիվ, նրա ձեռագրերի քառորդդարյա առաջին ընթերցողի իրավունքով և ուսանողը, ապա վերջին ասպիրանտներից մեկը լինելու բարեբախտությամբ փորձեմ ներկայացնել մեծ գիտնականի բնավորության, աշխատելաճի, նիստուկացի և գիտական վարպետության ինչ-ինչ առանձնահատկություններ:

* * *

Չափազանց տպավորիչ էր առաջին հանդիպումը. դա 1974-ի ամռանն էր Դիլիջանի իր առանձնատանը: Բահը ձեռքին՝ ջրի ճամփա էր բացում երկհարկանի տունը եզերող վարդերի համար: Հիսունի շեմին գտնվող միջահասակ, ճերմակամորթ ու կապուտաչ գրաքննադատը, որն արդեն ուներ գիտական պատկառելի վաստակ, բացի այդ՝ երկար տարիներ ղեկավարում էր մայր բուհում իր հիմնած խորհրդահայ գրականության ամբիոնը, և նրա հեղինակած դասագրքով էինք սովորում աշակերտներս, մանկան պես ժպտում էր վարդերին, շոյում կոկոնները և ինչ-որ բաներ շշմջում: Մի պահ նույնիսկ թվաց՝ խոսում է ծաղիկների հետ: Հետո սկսեց պատմել ծաղիկների, մասնավորապես վարդերի մասին, մատնացույց արեց դրանց տեսակները՝ ամերիկյան «Սուպեր սթար» կոչվողներից մինչև սովորական «Էլիզաբեթները» կամ վարսանդից մինչև թերթիկների ծայրերը շարունակ գունափոխվող հազարաթերթիկները... Հատկապես ուշադիր էր ընկերների, այդ թվում՝ Վախթանգ Անանյանի նվիրած թփերի ու արծաթափայլ եղևնիների նկատմամբ: Առհասարակ շատ էր սիրում Դիլիջանն ու

³ Հր. Թամրազյանի մասին գրել են շատերը՝ գրողներ ու մտածողներ, գրականագետներ և, ընդհանրապես, արվեստի մարդիկ (տես ներկա հատորում զետեղված «Կենսամատենագրությունը», ինչպես նաև գրականագետներ Ս. Մուրադյանի, Ժ. Քալանթարյանի և Ս. Սրապիոնյանի՝ Հր. Թամրազյանի «Երկերի» Ա /2006/, Բ /2009/, Գ /2010/ հատորներում հաջորդաբար տպագրված առաջաբանները):

տեղացիներին, վերջիններիս համարում էր ազնիվ, հեզ ու մեղմաբարո: Սիրում էր առողջարանային քաղաքի մեղմ կլիման և զարմացած ու հիացած ասում, որ աշխարհի թերևս միակ վայրն է, ուր արև ժամանակ հանկարծ կարող է առատ ձյուն տեղալ: Արև ու ձյուն. իր խոսքով՝ մի՞թե դա չէ Ջեյ Լոնդոնի նկարագրած «ձյունի ցնծությունը»...

Նրա առանձնատունը Աղստև գետի արևելահայաց բարձունքի վրա է, իսկ պատշգամբը նայում է դեպի արևմուտք. հեռու հորիզոնում տարածվում են գանգրահեր անտառներն ու երկնաքերծ լեռները... Սիրում էր նստել պատշգամբում ու անդադար նայել հեռուներին: Մի անգամ էլ պատմեց նախօրեի մայրամուտից առաջ տեսած մի արտասովոր դեպքի մասին, որից շատ էր տպավորվել. հուլիսյան տապ ու երաշտից հալածական եղնիկների հոտը՝ հարյուրավոր պախրաներ և կխտարներ, անտեսելով հնարավոր բոլոր վտանգներն ու աղետները, անտառից իջնելով, համարձակվել էր կտրել-անցնել դեպի Իջևան տանող մայրուղին և մոտենալ Աղստև գետին՝ ջուր խմելու: Իսկ երթևեկությունը, մարդի՞կ, գետափին վազվզող ու անհոգ խաղացող երեխանե՞րը... Երթևեկությունը դադարել էր, բոլորը կարծես քարացել էին. մի պահ մարդն ու բնությունը ներդաշնակվել էին, գեղեցկությունը ցնցող ու անբացատրելի տպավորություն էր թողել մարդկանց, անգամ՝ գետափին խաղացող չարածճի փոքրիկների վրա: Գրականագետը փաստորեն ականատես էր եղել մարդու, բնության և կենդանիների եղբայրության տիեզերական պատկերին: Ութ-տասը թուփից հետո ծարավը հագեցրած եղնիկներն անհետանում են անտառում: Հրանտ Թամրազյանն այդ մասին պատմում էր բացառիկ հիացմունքով ու մի տեսակ անսքող տխրությամբ՝ երանի՜ եղնիկները երբեք չվախենային մարդկանցից...

Սերը մարդկանց, բնության, ծառ ու ծաղկի և կենդանիների նկատմամբ գալիս էր գիտնականի հայրենի եզերքից՝ նախալեռնային Աջաջուր գյուղից: Դրա վառ վկայությունն է նաև Հրանտ Թամրազյանի՝ ներկա հատորում ամփոփված «Հուշերիս հետ» գիրքը՝ պրոֆ. Ժենյա Քալանթարյանի խմբագրմամբ ու առաջաբանով: Վերջինիս իրավացի գնահատությամբ՝ «այս գիրքը չի կարող տեղավորվել հանրածանոթ ժանրի շրջանակներում: Ինքնակենսագրական երկերին բնորոշ գեղարվեստական պատումն ու վերհուշն այստեղ զուգակցվել են գիտականորեն տրամաբանված շարադրանքի ու օրագրային խոստովանությունների հետ՝ ստեղծելով ժանրային յուրօրինակ համադրություն»⁴: Հիրավի, Հրանտ Թամրազյանն ինքնատիպ էր ամեն ինչում, նաև հուշագրության մեջ. բնատուր շքեղ ձիրքը, ճեղքելով ժանրի ավանդական սահմանները, ստեղծել է միջժանրային մի գրավիչ ստեղծագործություն, ուր գիտնականի լայնախոհ հայացքին ու անշեղ տրամաբանությանը խառնվել են հատկապես արևմտահայ ինքնակենսագրական վիպակներին այնքան բնորոշ անկեղծ պատումն ու

⁴ Թամրազյան Հր., Հուշերիս հետ, էջ 3:

վերհուշը, հաճախ՝ թոթովենցյան նրբին քնարականությունն ու սրտմաշուկ մորմոքը և Ջապել Եսայանի մեղմ ու ազնիվ խոստովանանքները...

Ակադեմիկոս գրականագետը զանազան ուսումնասիրություններ գրելիս ու գիտատեսական ընդհանրացումներ կատարելիս բնավ երկրորդական չէր համարում խնդրո առարկա հեղինակի կյանքի ու գործունեության զանազան հանգամանքները, անգամ՝ թվացյալ մանրուքները. ընդհակառակը, իրավացիորեն շեշտադրում էր, որ եզերքը, ծննդավայրը, ընտանիքը, բնաշխարհը, մարդիկ ու մարդկային հարաբերություններն անվիճելիորեն խոր կնիք են դնում հասակ առնող յուրաքանչյուր անհատի և հատկապես զգայուն ու խորունկ հոգիների վրա, իսկ գեղարվեստի տեսակետից էլ հաճախ դառնում վճռորոշ: Գուցեև ինքն առանձնապես հակված չէր բանասիրական փաստը հայտնաբերելու տենդագին եռանդին, թեև միշտ բարձր էր գնահատում մեղավաջան այդ տքնանքը և անձամբ էլ Ալեքսանդր Շիրվանզադեի կյանքին ու գործունեությանը նվիրված մենագրությունը կամ հայ գրական-քննադատական մտքի պատմության հատորներն ստեղծելիս կատարել էր բանասիրական անհաշիվ գյուտեր, բայց գիտական նուրբ դիտողականությամբ նա, անշուշտ օգտագործելով աղբյուրագետ-տեքստաբանների կուտակած հարուստ նյութը, Պետրոս Դուրյանի և Միսաք Մեծարենցի քնարերգության աղերսներն ու տարբերությունները փնտրում ու հայտնաբերում էր վաղամեռիկ բանաստեղծների եզերքներում, ծննդյան, միջավայրի ամենազանազան հանգամանքներում: Ինչու՞ է, ասենք, պոլսեցի Դուրյանը մահվան գնացել վիթխարի բռնկումով ու հրդեհումով, իսկ բինկյանցի Մեծարենցը՝ մեղմորեն վառվելով. ի վերջո, մահվան տեսիլների ու սրսփուքների մեջ անվերջ բզկտվող, «երկնքի հիվանդությամբ» բռնված պատանիներից ու՞մ համար էր աշխարհում ապրելն ավելի դժվար... Սրանք բնավ ոչ ոյուրին հարցադրումներ էին, որոնց գրականագետը տալիս է ուրույն պատասխաններ՝ դարձյալ հենվելով կենսական տարերքի քանիցս փորձված զգացողության վրա. «...Դուրյանը չգտավ և չէր էլ կարող գտնել... հոգու ապաստան և մխիթարություն: Նա մնաց մեն-մենակ իր անհուն թշվառության մեջ՝ չունենալով կենսական հենարաններ: Թերևս նաև դրանով պետք է բացատրել «Տրտունջքի» ծնունդը, ահռելի ցավի, ցասման, աշխարհից վիթխարի կսկիծով ու բողոքով բաժանվելու գաղտնիքը: Պոլսաբնակ պատանին չունեի իր հեռավոր եզերքը, երազների հայրենիքը: Եվ այդ նեղ սահմանները շատ ավելի էին զորացնում ներքին ճնշումն ու հոգու բռնկումը: Այնինչ Մեծարենցի դժբախտության ու երգի մեջ ընկած էր մեծ բնությունը, հայրենի եզերքը, հույսերի ու կարոտների աշխարհը: Եվ դա մեղմացնում էր նրա ցավը, բացում խոհերի ու ապրումների ուրիշ ուղիներ, երգի նոր հորիզոններ, մե-

ղեղիների այլ ակունքներ»⁵: Կամ՝ վկայակոչելով Հովհաննես Թումանյանի տպավորությունները՝ Հրանտ Թամրազյանը մի դեպքում Վահան Տերյանի անծայր տխրությունը և լռիկ միայնությունն ու վեհությունը բացատրում էր Ջավախքի լեռն բնության ու երկնքին մոտ՝ լեռների ծոցում ծփացող լեգենդար Փարվանա լճի՝ ամբողջովին թախծով ու աղջամուղջով ողողված բնապատկերներով («Այս առնական և նուրբ գեղեցկությունը, վեհությունը և քնքշությունը խոր կնիք են դրել մանուկ հոգու վրա: Նա հետո անհուն կարոտով է գրել իր հեռավոր եզերքի բարձրության բերկրանքի՝ վեհության, երկնքի անեզրական ծովի մասին...»⁶), մի այլ դեպքում Հովհ. Թումանյանի անհուն մարդասիրության ակունքները որոնում ու գտնում էր Լոռվա չնաշխարհիկ բնության և մանկության պայծառ հիշատակների մեջ. «Թումանյանի ստեղծագործության մեջ հազար ձայնով կանչում են մանկության հուշ-հիշատակները, վերապրումները, նորից նոր նա ապրում է անդարձ օրերի կարոտն ու թախիծը: Մանկությունն ապրում, լիցք է տալիս նրա բանաստեղծական խառնվածքին, անգամ թափանցում փիլիսոփայական երգերի ու քառյակների մեջ...»⁷:

Սրանք գիտական բարդ ու նուրբ դիտումներ են՝ միաձուլված խոր հոգեվերլուծությանն ու բանաստեղծական լեզվին՝ այսօր էլ այնքան անհասանելի շատ-շատերին: Իսկ որտեղի՞ց էր գալիս այդ ճանաչողությունը, կենսական երևույթների և դրանց հետ շաղախված՝ գեղարվեստական նյութի խոր իմացությունն ու բացառիկ զգացողությունը: Անշուշտ, հենց գրականագետի ապրած կյանքից, մանկության ու պատանեկության երբեք չխամրող հուշերից, ծննդավայրից, ընտանիքից... Թող զարմանալի չթվա, սակայն գիտնականի ուսումնասիրություններում անգամ շատ հաճախ նշմարվում են սեփական կյանքի հեռավոր արձագանքները, մանկության ու պատանության թե՛ անհոգ և թե՛ հոգսաշատ օրերի անդրադարձները: «Յոթ օրում հագիվ հասանք Երևան,- հուշերի գրքում պատմում է Հր. Թամրազյանը դպրոցն ավարտելուց հետո իր՝ առաջին անգամ Երևան գնալու մասին.- մեքենաներ չկային, միայն ամերիկյան ավտոշարասյուներն էին անդադար, անվերջ, անկանգ գնում դեպի Պարսկաստան և գալիս: Պատերազմ էր: Երևանը: Անհուն կարոտով են հիշում այգիների մեջ կորած փշատենիների բույրով բռնված այդ փոքրիկ քաղաքը: Դա քաղաք էլ չէր, այլ խաղաղ և ջերմին, հարազատ մի սիրտ, ուր նահապետականությունը, խառնվելով քաղաքակրթությանը, մի ուրույն հմայք էր տալիս կյանքին»⁸: Ահա և տաժանակիր ճամփորդությունից հետո գավառական քաղաքից Բաքու եկած պատանի Ալեքսանդր Շիրվանզադեի ու նոր միջավայրի նկարագրությունը՝ նույն գրականագետի ներկայացմամբ.

⁵ **Թամրազյան Հր.**, Երկեր Գ, Երևան, «Նաիրի» հրատ., 2010, էջ 115:

⁶ **Թամրազյան Հր.**, Երկեր Բ, Երևան, «Նաիրի» հրատ., 2009, էջ 399:

⁷ Նույն տեղում, էջ 55-56:

⁸ **Թամրազյան Հր.**, Հուշերիս հետ, էջ 44-45:

«Մալականի վիթխարի բեռնատար ֆուրգոնը երեք օրվա տաժանակիր ճամփորդությունից հետո նրան հասցնում է Բաքու: Արխալուղը հագին, մորթե գդակով, պարսկական քոշեր հագած գավառացի պատանու հայացքի առաջ փռվում է համայն հույսերի քաղաք Բաքուն՝ տափակ կտուրներով, գործարանների ու հանքերի թանձր ծխով, նավթային բուրգերի սև անտառով: Ինչպիսի՜ հակադրություն Շամախու ծաղկածիծաղ բնության և այս մռայլ կոլորիտի միջև, երազի ու իրականության միջև»⁹:

* * *

Չեքիաթային է եղել ապագա գիտնականի ծնունդը՝ հռչակավոր Մակարավանքից փոքր-ինչ ներքև՝ անտառի փեշերին փռված գյուղի անշուք տներից մեկի բակում: «Ծնվել եմ 1926-ի սեպտեմբերի 6-ին՝ սարի քոչի ժամանակ,- տարիների հեռավորությունից հիշում է արդեն կյանքի ութերորդ տասնամյակը ոտք դրած գրականագետը:- Մայրս, երկունքի ցավերով բռնված, քայլել է մոտ 15 կմ: Տուն հասնելուն պես, հենց դռան շեմին՝ սրահի մոտ, սալ քարի վրա, ծնել է ինձ: Ուզեցել եմ անունս դնել Քոչար, բայց գյուղսովետի քարտուղարուհի Արուսը համառել է և ըստ ցուցակի ինձ անվանել է Ջրանտ: Մայրս շատ է ուրախացել»¹⁰:

Աշխարհի բոլոր երեխաների պես նա էլ ապրել է մանկության անհոգ օրերի բերկրանքը. մեծացել է սարերում, ինչպես ինքն էր սիրում հաճախ ասել՝ «երկնքին մոտ», անսահման սիրել է բնության տարերքը՝ ամպրոպը, կատաղի անձրևը, կարկուտը, գարնան ձնհալից ու անձրևներից սնունդ առնող տարօրինակ գետը, որը երաշտից մերթ այնքան էր խեղճանում, որ անասուններն անգամ ջուր չէին գտնում, մերթ այնքան վարարում, որ կով կամ գոմեշ էր քշում-տանում: «Փոքրուց շատ էի սիրում ծաղիկներ,- պատմում է գրականագետը:- Նարգիզը՝ խոշոր, բուրավետ, դեղնանարնջագույն: Բուսնում էր սարերի լանջերին, հատկապես՝ հյուսիսային թեքությունների վրա, սիրում էր խոնավությունը: Քաղում էինք Կոճաքարում, Սևքարի սարի բարձունքում՝ Օկոնում, Նազրի աղբյուրի շրջակայքում, կազմում էինք շատ խոշոր փնջեր: Երկար ժամանակ չէր թառամում: Սարերում հատկապես քաղում էին Վարդավառին, կապում կովերի ու երինջների եղջյուրներին... Իրիկնադեմին, կարծես, ծաղիկների դաշտ էր շարժվում, ինչպես «Մակբեթի» մեջ անտառն էր շարժվում...»¹¹: Նարգիզից բացի՝ սիրել է առհասարակ դաշտային բոլոր ծաղիկները՝ յուրաքանչյուրն ուրույն բույրով, յուրաքանչյուրն իր տեսակի մեջ անկրկնելի՝ յուղածաղիկները՝ ոսկեգույն,

⁹ **Թամրայան Ջր.**, Շիրվանգաղե. կյանքը և գործը (Երկրորդ բարեփոխված հրատարակություն), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1978, էջ 15:

¹⁰ **Թամրայան Ջր.**, Յուշերիս հետ, էջ 24:

¹¹ Նույն տեղում, էջ 37:

փոքրիկ, հոտավետ, մերջանը, խնձորածաղիկները՝ զանազան գույներով, ճուտի դեղին ծաղիկը, երփնազան ճահճածաղիկները, զանգակածաղիկները... Նաև՝ կարմիր, դեղին և սպիտակ ծաղիկներով մասրենիները:

Բոլորից շատ, սակայն, սիրել է վարդերը, որ իրենց պարտեզում չեն ունեցել: Տասնամյակների հեռավորությունից այդ մասին մեզ է հասել մի ազդեցիկ հուշաբեկոր, որը պատմում է գեղեցիկի նկատմամբ անհուն սեր տածող և ուսուցչուհուն անպայման վարդեր նվիրել ցանկացող երեխայի մասին. յոթ-ութ տարեկան դպրոցականը մի օր չի դիմանում հարևանի վարդերի հմայքին ու հատելով այգու սահմանը՝ վարդեր է պոկում՝ դպրոց տանելու համար: Բայց բռնվում է. զայրացած հարևանը, կարծելով՝ մանչուկը վազերի թթվաշ շիվեր է պոկել՝ ուտելու համար, նախատում է ու գոռոռում, իսկ երբ տեսնում է վարդերի փունջը, զարմանում է ու զղջում, որ վախեցրել է: Այս ամենի մասին իմաստնացած գիտնականը պատմում է չխամրող հիշողությամբ, բոլոր մանրամասներով, գրեթե միշտ՝ գեղարվեստի աստիճանին հասնող ազդեցիկ պատկերներով, և ընթերցողն ավելի շոշափելի է զգում գրականագետի բացառիկ կենսազգացողությունը սնող երակներից ևս մեկը:

Պատանի հասակից անհագորեն ընթերցում է. սկզբում՝ անկանոն, ձեռքն ընկածը. ասենք, Կարլ Մարքսի հաստափոր «Կապիտալը», որի ընթերցանությունը վերջացնում է առաջին իսկ էջերի վրա, Չարլզ Դարվինի «Տեսակների ծագումը» կամ Վլադիմիր Արսենևի «Դերսու Ուզալան»: Գյուղացի երեխան տարբեր գրադարաններից ու անհատ մարդկանցից հայթայթում է զանազան գրքեր, որոնք նրան շուտով տանում են գեղեցիկի զարմանահրաշ աշխարհը, դեպի հեռավոր, անհայտ եզերքները... Նրան հատկապես հարազատ են դառնում Զովհաննես Թումանյանն ու Վահան Տերյանը, Ռաֆֆին ու Ալեքսանդր Շիրվանզադեն, Գաբրիել Սունդուկյանն ու Նար-Դոստը... Իսկ Ավետիս Ահարոնյանի «Լռությունը» և «Մորկի սուրբը» պատմվածքներն ընթերցելու համար նույնիսկ շրջակա գյուղերն է գնում: Նաև թարգմանաբար կարդում է օտար բազմաթիվ գրքեր՝ Վիլյամ Շեքսպիրի «Համլետը» և «Մակբեթը», Օնորե դը Բալզակի «Հայր Գորիոն» և «Գոբսեկը», Գյուստավ Ֆլորբերի «Տիկին Բովարին», Հենրիկ Սենկևիչի «Յո՞ երթասը», Պրոսպեր Մերիմեի վիպակները, Լև Տոլստոյի «Կոզակները»... Հաճախ բանաստեղծություններ էր կարդում դասակիցների, հատկապես մի նուրբ ու լրջմիտ, խոհուն ու բարեհամբույր աղջնակի՝ իր ապագա կնոջ՝ Լենա Աթաբեկյանի հետ. ընթերցում էին ուշադրությամբ, հուզվում հատկապես Եղիշե Չարենցի «Հայնրիխ Հայնե» բանաստեղծության՝ պրետական մեղքերին ու ներմանը վերաբերող տողերից:

Ի դեպ, Եղ. Չարենցի մասին: Հանճարեղ բանաստեղծի ստեղծագործությունը դեռ պատանեկան շրջանից է զբաղեցրել ապագա գրականագետի միտքը, հետո դար-

ծել նրա կյանքի մշտական ուղեկիցը, վիթխարի ալեկոծումներ տվել տաղանդավոր, մեծ աղմուկ հանած ու արդեն քանիցս արժևորված մի շարք հոդվածներում և իր գրական հանգրվանը գտել «Եղիշե Չարենց»՝ չարենցագիտության մեջ երբևէ ստեղծված լավագույն մենագրության մեջ: Իսկ Եղ. Չարենցի հետ ծանոթությունը կայացել էր շատ վաղ՝ Զր. Թամրազյանի՝ դեռ ցածր դասարաններում սովորելու տարիներին. «Իմ մանկության օրերին հատուկ դեր է խաղացել Ե. Չարենցը: Սկզբում տեսա դասագրքերում: 1937-ին արտասանեցի «Ընկերները» փոխադրությունը Եսենինից՝ շրջկենտրոնում, օլիմպիադայի օրերին: Դեռ խառը խոսում էին Չարենցի՝ արգելված լինելու մասին: Բայց իներցիայի ուժով շարունակում էին սիրել: Հետո՝ 1937-ին թե 38-ի սկզբին դուրս էին նետել շատերի գրքերը գրադարանից և վառել: Դրանցից ես փախցրի Չարենցի «Գիրք ճանապարհին», Բակունցի «Սև ցելերի սերմնացանը» և, կարծեմ, Մահարու «Մրգահասը» հրաշալի հրատարակությունները»¹²: Սա ժամանակին մեծ համարձակություն էր և խիզախություն. անհատի պաշտամունքի հրահրած ինկվիզիցիայի ճիրաններից փրկված գրքերի պատճառով երեխային ու ամբողջ գերդաստանին կարող էր սպառնալ գնդակահարություն կամ, լավագույն դեպքում, սիբիրյան տևական կամ անվերադարձ աքսոր... Գրքերի արժեքը դեռևս ենթագիտակցորեն հասկացող շնորհալի տղան դրանք թաքցնում է զանազան տեղերում՝ տանիքում, խոտի դեզում, հարդի մեջ... Հետագայում՝ 1943-ին, դրանք հետը տանում է Երևան և տարիների անց զանազան առիթներով մեկական օրինակ նվիրում իր արժանավոր ընկերների՝ Եղիշե Չարենցի վերջին մատյանը՝ Վահագն Դավթյանին, Ակսել Բակունցի ժողովածուն՝ Սուրեն Աղաբաբյանին:

Իսկ որտեղի՞ց էր գալիս պատանու գրքասիրությունը և հանուն կիսաայրված գրքերի՝ անձնագրոհությունը: Գրականագետն իր հուշերի գրքում տալիս է դրանց պատասխանը՝ ամենից առաջ ուսուցիչներից: Եվ երկար տասնամյակների հեռավորությունից նա բացառիկ սիրով ու ակնածանքով է պատմում իրենց գործին ու կոչմանն անմնացորդ նվիրված այդ անձնագրոհ մարդկանց մասին: Հուշագիրը, որքան էլ իր հիշողությունն անվանում է հոգնած, այնուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրին պահում է հոգու նվիրական մի անկյունում և պատմում է կենդանի գույներով, անզամ կենսագրական մանրամասներով. «Նրանց շարքում առանձնանում էր մաթեմատիկայի ուսուցիչ, բազմակողմանի զարգացած և կարդացած Պարույր Քրմոյանը իր կնոջ՝ ռուսաց լեզվի ուսուցչուհի Ջոյայի հետ: Քրմոյանն ավարտել էր Մոսկվայի տնտեսագիտական ինստիտուտը (նրա հայրը բռնադատված էր): Այդ զարմանալի տաղանդավոր մարդը հետո շրջեց մի շարք գյուղեր, եղավ Չանախչիում, Հրազդանում: Ուզում եմ հիշել Այունց Հակոբին, որը շատ շնորհալի ուսուցիչ էր՝ Կարմիրի շրջանից: Գնաց

¹² Նույն տեղում, էջ 27:

բանակ, չվերադարձավ: Իմ սիրելի ուսուցիչների թվում էին նաև Հովհաննես և Անդրանիկ Քալանթարյանները՝ Շամշադինից, Հայկ Խենջյանը՝ Ռևազու գյուղից, Մեսրոպ Ղազարյանը՝ Սարիգյուղից: Չնոռանամ Ներսիսյան քույր և եղբայրներին՝ Հեղինե, Համո և Սարգիս: Լավ են հիշում նաև ֆիզիկայի ուսուցիչ Հայկ Ղազարյանին և նրա շիկահեր գերմանացի կնոջը»¹³:

Հուշագրի տպավորությամբ՝ իր ծննդավայրը եղել է կյանքի ուրիշ եզերք, ուր մարդիկ ապրել են կարծես այլնուրակայինի պես. «Մանավանդ՝ սիրո, ցավի և եղբայրության ուրիշ չափերով, մարդիկ, կենդանիները, բնությունը...»¹⁴: Աչաջուրցիները հանգիստ, աշխատավոր հողագործներ էին, անասնապահներ, որ ամեն տարի ուխտի էին գնում Մակարավանք, սիրում էին գիրն ու գրականությունը, գյուղի դպրոցն էլ այնքան համբավավոր էր, որ դարձել էր կրթական օրինակելի օջախ գավառի շատ գյուղերի համար:

Հր. Թամրազյանը, այնուամենայնիվ, չի իդեալականացնում բնօրրանը. տակավին երեխա՝ ականատես ու ականջալուր է դառնում կյանքի ցավերին: Այսպես, մանուկ հոգուն մինչև կյանքի վերջը տանջում էր Կիրովաբադից Աչաջուր տեղափոխված մի շատ շնորհալի նորահարսի՝ ուսուցչուհի Մանյակի կյանքի ողբերգական պատմությունը: Ընդարձակ եկեղեցուն պատրաստված բեմի վրա կազմակերպվում էին թատերական ներկայացումներ, որոնց մասնակցում էր նաև Մանյակը՝ բոլորին հիացնելով իր անզուգական ձայնով ու խաղով: Եվ մի օր էլ անիմաստ խանդի հողի վրա գազազած ամուսինը, կնոջը խաբելով, տանում է մոտակա ձորակը, խեղդում ու հետո քարով կտրում կոկորդը: Գյուղը ցնցվում է այդ չարագործությունից և անմիջապես անցնում անտեր ու անմեղ զոհի կողմը. «Մանյակի կորստյան ցավը միացել է գյուղի պատմությանը և մինչև հիմա մնում է գյուղի մարդկանց հիշողության մեջ: Ավելին. այդ օրից մինչև այսօր ոճրագործության տեղը՝ ձորակը, ժողովուրդը դեռ կոչում է Մանյակի ձոր: Ահա ես էլ այս պատմությունը փոխանցում եմ գալիքին: Մահու տրված գեղեցկության ցավը երբեք չի անոքվում»¹⁵: Ուշադրություն դարձնենք վերջին նախադասությանը. մի՞թե հենց այդ սկզբունքով չէր առաջնորդվում գիտնականը գրական զանազան երկերի վերլուծություններում՝ մշտապես համոզված, որ աշխարհի բոլոր մեծ գրողներին միավորել է հիմնականում մի ընդհանուր հատկանիշ՝ խոր անհանգստությունը և տագնապը բարոյական արժեքի ու եղծված և տրորված գեղեցկության համար...

Մանուկ հոգին ականատես է եղել էլի ուրիշ ցավերի՝ իր համար դեռևս աղոտ, անհիմանալի ու անմարդկային, որոնք հետագայում, տասնամյակների բովում պարզ-

¹³ Նույն տեղում, էջ 23:

¹⁴ Նույն տեղում, էջ 31:

¹⁵ Նույն տեղում, էջ 16:

վելով և տարրորոշվելով, կոփում են գեղագետի միտքն ու հոգին՝ դառնալով արդար և խիզախ մոնջյուններ նախապաշարված հասարակարգի դեմ (վկան՝ Եղ. Չարենցին, Ա. Բակունցին և առհասարակ 1930-ականների անմեղ զոհերին կամ բռնադատվածներին նվիրված ուսումնասիրությունները): Ահա 10-ամյա երեխան, շրջապատված վշտից քարացած դեմքերով հողաբույր համազյուղացիներով, 1936-ի հուլիսյան մի օր իրենց գոմի առաջ՝ գոմաղբի կույտի մոտ, սահուն կարդում է «Սոցիալիստական գյուղատնտեսություն» թերթի առաջին էջի հաղորդագրությունը. «Ամսի 9-ին, Թբիլիսիում, ինքնասպանություն է գործել Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը...»: «Սուտ են գրել, վրացիների գործն է, էդ ակնոցավոր օձը՝ Բերիան, սպանել է մեր ջահել թագավորին», - միաձայն իրենց վճիռն են կայացնում գյուղացիները, իսկ միամիտ մայրը, բոլորովին անտեղյակ դրսի ողբերգական անցուդարձին, ոգևորված դեռահաս որդու՝ վարժ թերթ կարդալուց, ուրախացած պտտվում է տանն ու նրա համար ձվածեղ պատրաստում¹⁶: Հուշագիրը խոստովանում է, որ միայն շատ տարիներ հետո է պարզվում ճշմարտությունը՝ Բերիայի դատավարության ընթացքում. միշտ անսխալական է ժողովրդի բնազդը. «Նաիրյան դոֆինն» սպանվել էր «ակնոցավոր օձի» ձեռքով: «Անցել են տասնյակ տարիներ: Այդ ընթացքում, ի պատիվ մեր մտավորականության և ողջ ժողովրդի, Խանջյանը մնաց իբրև սուրբ նահատակ... Եվ խոնարհվում ես այդ ժողովրդի բարոյական ուժի առաջ, ով գիտի պահպանել իր նահատակների հիշատակը»¹⁷, - գրում է Եղ. Չարենցի «Դոֆին նաիրական» խորագրով բանաստեղծությունների լավագույն մեկնիչը:

Եվ ի՞նչ իմանար «Նաիրյան դոֆինի» «ինքնասպանության» լրագրային բոթն անգիտակցաբար սահուն կարդացող երբեմնի գեղջուկ պատանին, որ վեցուկես տասնամյակ հետո ինքը զարմանալի մի զուգադիպությամբ պիտի հավերժորեն հանգչեր հենց այդ գեղեցիկ, «բեղերով ու խալավոր կեպիով» լեգենդար մեծ նահատակի՝ Աղասի Խանջյանի ու իր ամենասիրելի ուսուցչի՝ Արսեն Տերտերյանի գերեզմանների կողքին: Հայրենի եզերքի երկու արժանավոր զավակների, որոնց միացավ նույնքան արժանավոր երրորդը՝ իրենց կրտսեր ժամանակակիցը՝ մեկից վերցրած հայրենասիրության ազնիվ հրդեհներ ու ըստ հարկի՝ նահատակվելու պատրաստականություն, մյուսից՝ գեղեցիկ գրականության արարիչ լույսը:

* * *

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 29:

¹⁷ Նույն տեղում, էջ 29-30:

Երեխան շրջապատված էր ազնիվ ու աշխատասեր ծնողներով, հոգատար քույրերով ու արժանապատիվ եղբայրներով: Հայրը՝ Սմբատը, իմաստուն, զուսպ ու քջախոս մարդ էր, իսկ մայրը՝ Նոյեմզարը, ֆիզիկապես ուժեղ ու առողջ մի կին, որին սարերում հաճախ լինելու համար Սարի Նան էին ասում: Ընտանիքն անդուլորեն աշխատում էր՝ այդպես վաստակելով իր արդար հացը: Նանն ուներ բարձր, արծաթահնչյուն ձայն, որը լսելի էր կիլոմետրի վրա, երբ նույնիսկ խոսում էր սովորական տոնով: Ի դեպ, նման ձայնով էր օժտված նաև Հրանտ Թամրազյանը. Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի մասնաշենքի դեռևս ցածր հարկերում գրեթե միշտ կարելի էր տեղեկանալ սիրված դասախոսի ու գրականության մայր ամբիոնի վարիչի՝ չորրորդ հարկում տեղակայված իր աշխատասենյակում գտնվելու կամ չգտնվելու մասին:

Գիտնականը ծնողներից ժառանգել էր տարբեր հատկանիշներ՝ հորից՝ սթափ հայացք, նուրբ դիտողականություն, անհուն բարություն ու խիղճ, խոր զգացականություն, և նրա մասին պատմելիս էլ մի տեսակ զգաստանում էր, ու թվում էր՝ նույնիսկ փոքր-ինչ խեղճանում... Այլ էր Նանի պարագան. Հովի. Թումանյանի «սարերի արծիվ» Սոնա մոր պես հով սարերին սովոր և հազար ու մի ցավ տեսած այդ կինն օժտված էր բավական սուր մտքով, համարձակությամբ, հախուռն բնավորությամբ և ամուր առողջությամբ: Նա էլ որդուն տևականորեն պահել է «երկնքին մոտ»՝ բարձր սարերում, և այդ հանգամանքը նկատի ունենալով է տասնամյակներ հետո նշանավոր սրտաբան, երջանկահիշատակ Ջավեն Դուլաբջյանը, դիմելով 1981-ին սրտամկանի լայնածավալ ինֆարկտից հրաշքով փրկված գիտնականին, ասել. «Սիրելի՛ Հրանտ, ես գիտեի, որ կփրկվես. քեզ ամենից առաջ փրկեցին երկնամերձ սարերի մաքուր օդն ու պաղ աղբյուրների ջուրը...»:

«Հուշերիս հետ» գրքում հեղինակը մի առանձին ջերմությամբ է հիշում Նանին. «Միտքս անվերջ պտտվում է մորս շուրջը: Հեռու հեռվից ես տեսնում եմ այդ չարքաշ, հոգսերի մեջ գտնվող կնոջը՝ միշտ աշխատանքի մեջ, անձրևի, կարկուտի տակ՝ ժառանգներով, հետո էլ թռչներով շրջապատված, ֆիզիկապես ուժեղ և համարձակ էր: Անգրագետ էր, բայց ուներ սուր միտք և զարմանալի հիշողություն»¹⁸: Այդ ազնիվ կինը հարազատի պես էր վարվում անգամ կովերի հետ՝ կթելու ժամանակ մտերմիկ խոսելով նրանց հետ («Նիգյար ջան, բալա՛ ջան, աղջիկ ջան...»), իսկ նրանք էլ շարունակ լսվող ջերմ խոսքի ռիթմով կաթ էին տալիս խաղաղ ու խոնարհ: Իմաստուն ու համարձակ Նանը, ինչպես հավաստում է հուշագիր որդին, մի անգամ՝ կովկիթի ժամանակ, ստույգ աղետից փրկում է կթորուհիներին. «...մեր խնամին՝ Անախասը, սարի կին չէր, չէր հասկանում կովի լեզուն, վախենում էր կովից, որ երբեմն կթելու ժամանակ կաչում

¹⁸ Նույն տեղում, էջ 32-33:

էր իրեն: Մի անգամ կթելու ժամանակ կովին ճիպոտով խփեց: Կովը կատաղեց, սարսափելի ձայն հանեց, տրորեց պառավին և անցավ: Կատաղած կովը (գիժ կովը) շատ վտանգավոր է, բոլոր կովերը հավաքվում են նրա գլխին, ինչը կարող է աղետ բերել... Մայրս իսկույն առաջը կտրեց, շատ ուժեղ գոռաց կովի վրա, բռնելով պոզերը՝ ուղղակի չոքեցրեց... Կովը խեղճացավ»¹⁹:

Տաղանդաշատ գրականագետը, որի գրչին առհասարակ բնորոշ են գիտատեսական սթափ հայացքի ու պատկերավոր մտածողության ինքնօրինակ ընդելուզումները, հուշագրության մեջ իրեն անհամեմատ անկաշկանդ զգալով և որսալով քնարական պատումների հարազատ շունչը, կարծես թոթափում է գիտական պատասխանատվության «ծանր բեռն» ու ընդամենը մի քանի տողով քանդակում սեփական, իսկ ամբողջության մեջ՝ ընդհանրապես մոր կերպարը՝ ակամայից կարծես մրցելով նույն-իսկ ամենատաղանդավոր գրողների ստեղծած գեղարվեստական պատկերների հետ: Դրա պերճախոս վկայություններից է, օրինակ, հետևյալ հատվածը. «Յուզերի բարակ թելն ինձ տանում է մի ցավոտ առավոտ: Մայրս ձի է հեծել՝ կրծքին կապած մեկ տարեկան Սամվելի դին: Նա տանում էր հեռավոր, հեռավոր գյուղ՝ թաղելու իր չքնաղ մանկանը, որին իբրև «տարել է օրորոցագողը»... Անհուն տխրություն կար մորս դեմքին, լուռ արցունքներ: Երեխային տարավ մի սարվոր կնոջ հետ, առանց ծեսի և մեծերի. գյուղում այդպես էր սովորությունը. երեխան փոքր էր... Վրանաբնակները ծանր արցունքով ճանապարհ էին դնում մորս՝ սարի Նանին: Յիշում են այսօրվա պես. սարի լանջի կածանով հեռանում էր ձի հեծած մայրս: Իսկ ես՝ փոքրիկ երեխա, նրանց հետևից վազում եմ, անվերջ վազում ու լալիս: Մի օր հետո հետ եկավ մայրս՝ մի շալ կապած կրծքին և լուռ մտավ անձայր հոգսերի մեջ: Իսկ իմ հոգնած հիշողության մեջ հեռավոր աստղի պես ցուլում է պատկերը՝ սարի լանջի կածանով հեռացող մայրս՝ մարած որդին կրծքին կապած, և նրա հետևից աղիողորմ լացով անվերջ վազող մի փոքրիկ երեխա...»²⁰:

Խոստովանենք, որ վերոբերյալը գեղարվեստական ազդեցիկ պատկեր է՝ ճշմարիտ արվեստագետի գրչին արժանի: Այստեղ, սակայն, ամենաուշագրավն այդ փոքրիկ երեխայի բացառիկ դիտողականությունն է, որը, տարիների հոլովություն թանձրանալով, պիտի վերածվեր հայ գրականության մեջ կերտված մոր կերպարների խոր վերլուծությունների ու արժանի գնահատականների՝ բնավ չզիջելով ռուս գրականագիտության համանման դիտումներին: Որդեկորույս մայրը, ձի հեծած ու կրծքին կապած սիրասուն մանչուկի անշնչացած մարմինը, վշտից քարացած, լուռ արցունքներով իջնում է սարի լանջի կածանով: Վրանաբնակներն էլ, խորապես հասկանալով

¹⁹ Նույն տեղում, էջ 34:

²⁰ Նույն տեղում, էջ 31-32:

մայրական սիրո և տառապանքի հզոր երևույթը, ծանր արցունքներով ճանապարհ են դնում Սարի Նանին... Ահա և իմաստնացած գրականագետի՝ «Հովհաննես Թումանյան» մենագրության մեջ տեղ գտած խոր դիտումները՝ կատարված «Անուշ» պոեմի որդեկորույս մոր կերպարի առիթով. «Կսկիծն ահռելի ուժի է հասնում: Տեղի է ունենում հոգեբանական էֆեկտների կենտրոնացում, այսինքն՝ գեղարվեստական մեծ ընդհանրացում: Դարձյալ մի քանի տող, ու պատկերը ստանում է հոգեբանական հզոր լիցք: Խոր լռության մեջ լսվում է անզուսպ կատաղած, որդեկորույս, ցավից խելագար մոր ձայնը՝ որպես անհուն աղետի արձագանք...

Մենակ մի հոգի անզուսպ կատաղած՝

Հարա՛յ է կանչում, երեսը պոկում:

Մեռած չոբանի պառավ նանն է նա՝

Ցավից խելագար բառաչում, լալիս.

Տարաբա՛խտ ծընող, վազում է ահա,

Ձորիցն է տըխտը գոռոցը գալիս:

Մեռած չոբանի մոր՝ կատաղած պառավ նանի ետևից դեպի ձորն են վազում բոլոր մայրերը: Դա մի անզուգական պատկեր է, հանճարեղ խտացում: Պատկերի մեջ առանձնանում է, անշուշտ, Սարոյի մոր կերպարը: Խելահեղ ծեր նանը ցավից բառաչում է, խոր ձորից գալիս է նրա տխուր գոռոցը: Այս կերպարի շուրջ ստեղծվում է հոգեբանական թանձր մթնոլորտ, մոր ցավին այնքան բնականորեն միանում է մայրության ցավը: Դա շատ ազդեցիկ է դարձնում աղետի ողջ սարսափը: **Սարոյի կորստյան ցավին ավելանում է բոլոր կորցրած զավակների ցավը, աշխարհը բռնվում է ողբերգական սիրո և ցավի մշուշով**»²¹:

Որդեկորույս մայրեր ու համընդհանուր ողբ տեսնում են գրեթե բոլորը, ազդվում ավել կամ պակաս չափով, բայց միայն քչերին է տրված բուն ցավի մեջ թափանցելու և ճշմարտացի ընդհանրացումներ կատարելու ձիրքը: Իսկ հազվագյուտ այդ ձիրքը, անտարակույս, գալիս է մանկությունից, անջնջելի ապրումից ու զգայունությունից: Այսօր արդեն գրեթե անվիճելի է, որ եթե Հրանտ Թամրազյանն անսահմանորեն չսիրեր մարդկանց ու կենդանիների աշխարհը, սեփական մաշկի վրա չզգար աշխարհի ցավն ու կյանքի բերկրանքը, խորապես կապված չլիներ մայր բնության հետ և մանկության ու պատանության շրջանում էլ շատ-շատերի պես անհաղորդ մնար շրջապատի անցուդարձին, ապա հազիվ թե ծնվեին նրա գիտական ինքնատիպ, հաճախ բարդ ու նրբին դիտումները գրական երկերի գաղափարագեղագիտական, բարոյահոգեբանական արժանիքների և կերպարային համակարգերի մասին:

²¹ Թամրազյան Հր., Երկեր Բ, էջ 182-183:

Անտուան դը սենտ Էքզյուպերիի՝ «Բուրոր մարդիկ գալիս են մանկությունից» միտքը Յր. Թամրազյանի կողմից հաճախ հիշատակվող նախադասություններից էր: Իսկ մանկության օրերին նա ականատես էր ցավագին բազմաթիվ պատկերների, որոնք անջնջելիորեն ամրագրվում էին ընդունակ ուղեղում: Ահա դրանցից ևս մեկը՝ ոչ պակաս ազդեցիկը՝ դարձյալ քաղված հուշագրության էջերից. «Սարերում մառախուղ էր, մատը աչքդ կոխեին, չէիր տեսնի: Իսկ մեր կարմիր ձին և նրա՝ սրունքները սպիտակ, ճակատը պեծիկ քուռակը, որին շատ էինք սիրում, չեկան այդ իրիկուն: Առավոտն արդեն սուգ էր իջել վրաններից. նախրապանները բերել էին գայլերի կողմից քրքրված քուռակի մասունքը և կենդանի մնացած մորը, որը չէր կարողացել փրկել զավակին... Երեխաներս լալիս էինք: Իսկ մայր ձին, կանգնած մասունքի մոտ, լալիս էր՝ խոշոր-խոշոր արցունքներով և առաջին ոտքերով հողը դանդաղ քանդում: Լալիս էին նաև մեծերը՝ կարեկցելով մայր ձիուն: Մի քանի օր շարունակ սարերում հնչում էր նրա տխրագին խրխինջը...

Չետո այդ ամենին, որպես սեփական կենսագրություն, խառնվելու էին նաև Յովհաննես Թումանյանի խոհերն Աստծո արարածների հավասարության մասին:

«Մայրը» շատ փոքր նովելում նա պատմում է ծիծեռնակի մասին, որի անզգույշ ճուտը բնից ընկնում է ցած: Կատուն հափշտակում է ձագին: Մայր ծիծեռնակը քարանում է և մեռած ընկնում. «Շատ տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում այն գարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացա, որ ծիծեռնակի մայրն էլ մայր է, ինչպես մերը»²²:

* * *

Ինչպե՞ս էր աշխատում, ստեղծագործում ու ընդհանրապես ապրում Յրանտ Թամրազյանը:

Կյանքում ևս այնպիսին էր, ինչպես գիտության մեջ՝ բազմաշերտ՝ միշտ շենշող, հախուռն, համարձակ, արդարադատ ու անզիջում, ի՞նչ կա որ, երբեմն՝ սուբյեկտիվ: Ունենալով կենսակերպի ուրույն սկզբունքներ՝ ամեն ինչում սիրում էր կանոնավորություն, ազնվություն, չէր ներում ծուլերին ու ամբարտավաններին, իսկ որևէ սխալ արարք, նույնիսկ՝ աննշան, անգամ՝ ավելորդ բառ, պարզապես կարող էր հունից հանել հավասարակշռված ու բարի մտածողին: Չատկապես բարկանում էր, երբ ամբիոնի դասախոսները համալսարանի միջանցքներում գրականության մասին զրուցելու փոխարեն երբեմն քննարկում էին կենցաղային հարցեր: «Ինչպե՞ս չէք ամաչում. սա ի՞նչ խայտառակություն է. չէ՞ որ ամեն պահի պետք է մտածեք գրականության մասին ու

²² Թամրազյան Յր., Յուլերիս հետ, էջ 32:

վիճեք դրա խնդիրների շուրջ,- ասում էր ու ավելացնում:- Թե չէ՝ դրամն արժեզրկվել է... Հետո՞ ինչ: Վաղը կարժևորվի, բայց պարապ-սարապ խոսելուց ձեր խելքը չի ավելանա: Ո՞վ պիտի գրի ձեր փոխարեն, ո՞վ պիտի տեր կանգնի վաղվա գրականությանը»: Ընդհանրապես կարծում էր, որ մտավորականը պետք է լինի համեստ, չընկնի ավելորդ շքեղությունների հետևից: Իսկ 90-ականների կեսերին այդպիսի շքեղություններից էր համարվում բջջային հեռախոսը, որից ամբիոնում ունեին մի քանիսը, այդ թվում՝ և ես: Խուսափելով մեր գիտական ղեկավարի հանդիմանությունից՝ համալսարան մտնելուն պես այն անմիջապես անջատում էինք ու չքմեղանում: Հիշում եմ, որ մի անգամ, մոռանալով անջատել պայուսակում պահված հեռախոսս, այն հանկարծ զնգաց նրա ներկայությամբ: Հրանտ Թամրազյանը զարմացած նայեց ինձ ու հարցրեց, թե ինչ ձայն է: Շփոթված, չգիտես ինչու, պատասխանեցի, որ զարթուցիչ է: «Զարթուցիչն ինչու՞ ես մոտդ պահում, ա՛յ տղա,- հարցրեց, ու մինչ ես, անելիքս չիմանալով, պատրաստվում էի ինչ-որ անհեթեթ բացատրություն տալ, ինքն էլ մի տեսակ կարեկցանքով պատասխանեց,- հա՛, էնքան ես աշխատում ու հոգնում, որ տրանսպորտում քնում ես և ստիպված զարթուցիչ ես պահում»: Այս դեպքից անցել են տասնամյակներ, և մինչ օրս չեմ հասկանում՝ արդյոք այդքան միամիտ էր մեր ամբիոնի վարիչը: Հազիվ թե: Պարզապես խնայեց:

Հրանտ Թամրազյանն օժտված էր բացառիկ մարդաճանաչողությամբ, ներզգացողությամբ ու ներըմբռնմամբ՝ հատկանիշներ, որոնք հաճախ այնքան էին սրվում, որ թողնում էին ռենտգենյան յուրօրինակ ճառագայթների տպավորություն, և մարդ նրա լուրթ աչքերին նայելիս ականա զգաստանում էր: Այսօր արդեն՝ տարիների հեռավորությունից, նրան մոտիկից ճանաչողները քաջ հասկանում են, որ այս կամ այն անհատի կամ երևույթի մասին թամրազյանական դիպուկ ու պատկերավոր բնորոշումները միանգամայն անվրեպ էին ու մարգարեական... Նա չափազանց ուշադիր ունկնդրող էր, կայծակնային արագությամբ անգամ մի արտահայտությունից կարող էր որսալ դիմացինի մտադրությունն ու կողմնորոշվել: Այդ ընթացքում, իհարկե, երբեմն-երբեմն պատահում էին նաև սուրբեկտիվ ընկալումներ, սուր պոռթկումներ, բայց դրանք շուտով տեղի էին տալիս մտածողի, Եղ. Չարենցի խոսքով՝ «երկաթե կոնտրոլի» առջև, և ամեն ինչ ընկնում էր տեղը, ու վերստին հաստատվում այն ճշմարտությունը, որ Հրանտ Թամրազյանի սիրտը բոլոր դեպքերում մաքրամաքուր է, անքեն ու անհունորեն բարի...

Նույնը՝ գիտության մեջ: Երբ մենք՝ նրա ասպիրանտները, իր իսկ ցուցումով աշխատում էինք բանասիրական որևէ կնճռոտ խնդրի վրա՝ ամիսներով տքնելով Մատենադարանի, ազգային գրադարանի կամ Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի զանազան արխիվներում ու հետո դժգոհում, որ փնտրված նյութը

չենք գտնում, այդպիսին գուցե չկա ընդհանրապես, խորամանկ, բայց մեղմ ժպտալով՝ ասում էր. «Չի կարող պատահել, ուրեմն լավ չեք աշխատում. տրամաբանությունը ենթադրում է, որ նման հիշատակություն անպայման պիտի լինի: Մի՞թե չկար թորոս Ազատյանի կամ Ջրանտ Ասատուրի ֆոնդերում: Տարօրինակ է: Նորի՛ց նայեք: Նաև՝ ֆոտոժապավենները: Գնացե՛ք ու կարգի՛ն աշխատեք»: Եվ զարմանալին այն էր, որ այդպիսի հանդիպումներից հետո երկար փնտրվածը «հրաշքով» անմիջապես գտնվում էր, ու մենք՝ սկսնակ գրականագետներս, աստիճանաբար զգում էինք բանասիրական գյուտի ընձեռած անզուսպ բերկրանքն ու ստեղծագործական հաճույքը և ոգևորվում... Ինքն էլ մեզ հետ անկեղծ ուրախանում էր ու անչար ասում. «Է՛հ, ծուլյե՛ր, որ ասում էի...»:

Ոգևորվում էր երիտասարդ յուրաքանչյուր գիտնականի հաջողությամբ, խրախուսում ու աջակցում էր ատենախոսություններ գրելիս, իսկ աշխատանքի ընդունվելու համար էլ հաճախ, բառիս բուն իմաստով, կռվում էր վերին ատյանների դեմ, փոթորկվում... Այսօրվա պես հիշում եմ հենց տողերիս հեղինակի՝ պետական համալսարանում նախ՝ ասպիրանտուրա, հետո՝ աշխատանքի ընդունվելու համար նրա կրած անվերջ նեղությունները. խորհրդային վարչակարգում սովորական մահկանացուին մայր բուհում աշխատանքի ընդունելն այնքան էլ դյուրին գործ չէր, և դա հատկապես այն դեպքում, երբ կրթությունը բացառիկ արժեք էր, ու արժանավորներն էլ՝ ոչ սակավ: Իսկ այդ արժանավորների մեջ քիչ չէին նաև հենց գիտնականի մտավորական ընկերների կամ պաշտոնյաների զավակները: Նա գիտեր, ստույգ գիտեր, որ շուտով վաստակելու է դժկամների մի ամբողջ բազմություն, բայց, միևնույն է, հաշվի առնելով, որ մյուսների համար կմտածեն նրանց ծնողները, պաշտպան էր կանգնում իր նախընտրած թեկնածուին և բազմաթիվ միջնորդություններին պատասխանում չոր մերժմամբ: Իսկ այդ սկզբունքը հավասարապես վերաբերում էր բոլորին: Ուրիշ խոսքով՝ Ջրանտ Թամրազյանն անաչառորեն ճանփաներ էր բացում, եթե կարելի է այսպես ասել, անպաշտպան արժանավորների համար՝ այդ ընթացքում հասկանալիորեն վաստակելով հակառակորդներ: Եվ այս պահին ականայից մտաբերում ես Հակոբ Պարոնյանի մի դիպուկ խոսքը. «Ժամանակը ազնիվ թել մըն է, որ անով մեր կյանքը կը հյուսվի... Տարիներն ալ մեծ մարդոց պես են, իրենց աղոթողներն և անիծողներն ունին»:

Հայտնի իրողություն էր, որ անկոտրում մտավորականը, եթե աշխատանքային խնդիրներում, ամբիոնային հարցերում, այնուամենայնիվ, կարող էր գնալ ինչ-որ գիջումների՝ անպայմանորեն չմեղանչելով իր որդեգրած հիմնական սկզբունքների դեմ, բառիս բուն իմաստով թշնամին էր գիտական ցանկացած խոտանի՝ անկախ դրա հեղինակի ով լինելուց: Բացառություններ չկային: Գրականությունը հայրենիքի ու մոր հետ միասին բացարձակ սրբություն էր Ջրանտ Թամրազյանի համար, և նա անընկճե-

լի էր ու ամենից առաջ խստապահանջ հենց իր նկատմամբ: Այսօրվա պես հիշում եմ, թե վաստակած գիտնականն ի՞նչ եռանդով էր աշխատում իր կյանքի վերջին գրքի՝ «Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը» ուսումնասիրության վրա: Պարզապես այրվում էր, անվերջ զայրանում ու բողոքում այն բանասերներից, ովքեր վիճարկում էին հանճարեղ հայրենների՝ Նահապետ Քուչակի գրչին պատկանելը: «Չէ՞ որ հայրեններն իրենց վրա անտարակուսելիորեն կրում են մի հզոր անհատի պատկերավոր մտածողության, գրական բարձր ճաշակի ու բացառիկ վարպետության կնիքը,- բորբոքված ասում էր գիտնականը:- Սա ի՞նչ տարօրինակ եղծում է, ինչպե՞ս կարելի է դա չնկատել, ինչպե՞ս կարելի է չհավատալ Ղևոնդ Ալիշանին, Արիստակես Տևկանցին, Արշակ Չոպանյանին...»: Եվ արդեն հազարերորդ անգամ ձեռքն էր վերցնում խոշորացույցն ու ավերիչ շաքարախտից օր օրի տկարացող աչքերով նորից նոր զննում գրական վիթխարածավալ նյութը: Եվ այդպես ամեն օր, ընդհուպ մահվան նախընթաց երեկոն, երբ մեքենագրելու համար ինձ հանձնեց իր աշխատասիրության ձեռագրի վերջին մի քանի էջերը, նվիրական էջեր, որոնք պատրաստի վիճակում նրա ընտանիքին հանձնվեց արդեն... հոգեհանգստի օրը:

Հրանտ Թամրազյանն ուներ առասպելական աշխատասիրություն: Առաջացած տարիքում հիմնականում ստեղծագործում էր Դիլիջանի իր առանձնատանը, ուր նրա հոգատար կինը՝ տիկին Լենան, ամուսնու համար սիրով ու ամենայն ջանադրությամբ ապահովում էր աշխատանքային անհրաժեշտ պայմաններ: Մասնագիտությամբ երկրաբան և ներհուն այդ կինը, օժտված նաև գրական ուրույն ճաշակով, գրեթե միշտ ընթերցում էր ամուսնու հոդվածներն ու կատարում նրբին դիտումներ, որոնք ուշադրությամբ և գոհունակությամբ ունկնդրվում էին գիտնականի կողմից: «Լենան հավանել է, ուրեմն լավ է ստացվել»,- հաճախ էր ասում Հրանտ Թամրազյանը: Գրական ու գիտական երկերը սրբություններ համարող խստապահանջ մտածողն առհասարակ չափազանց ուշադիր էր հայտնված բոլոր կարծիքների նկատմամբ. գիտական որևէ աշխատանք տպագրության հանձնելուց առաջ ընթերցել էր տալիս որոշ գործընկերների, լսում յուրաքանչյուրին, անհրաժեշտության դեպքում բացատրում կնճռոտ խնդիրը, համաձայնում որևէ կոնկրետ տեսակետի հետ կամ, ընդհակառակը, իրեն հատուկ պոռթկումով մերժում: Լայնախոհ գրականագետը, սակայն, ամենից առաջ ինքը քաջ գիտեր իր ստեղծածի ուժեղ ու թույլ կողմերը և անվերապահորեն չէր ընդունում դրվատանքի ցանկացած խոսք:

Չի մոռացվում՝ երկար ու ձիգ տարիների տքնաջան աշխատանքի արգասիքը՝ «Հայ քննադատություն» եռահատորյակի ստեղծման պատմությունը: Ուրիշ որևէ աշխատանքի վրա թերևս այնքան ջանք ու եռանդ չի թափել Հրանտ Թամրազյանը, որքան այդ կոթողային ուսումնասիրության վրա, քանի որ, առանց չափազանցության,

մեն-մենակ կատարել էր գիտական մի ամբողջ հաստատությանը հասու գործ: Աշխատում էր չափազանց կենտրոնացած, ներքին լարումով, անվերջ ընթերցում էր բնագրերը և հանկարծ դադար տալիս ու ձեռքն առնում, ասենք, հույն ողբերգակների երկերը, Շեքսպիրի «Համլետն» ու «Մակբեթը», մեկ էլ կլանված, չգիտես արդեն որերորդ անգամ, վերընթերցում Տոլստոյի «Պատերազմ և խաղաղությունը» կամ Շոլոխովի «Խաղաղ Դոնը», Բալզակի վեպերը, Թումանյանի գործերը... Ինձ միշտ էլ զարմանալի էին թվում այդ տարօրինակ անցումները. ի վերջո, ի՞նչ կապ ունեին այդ հեղինակները գրականագետի բուն աշխատանքի, տվյալ պարագայում՝ հայոց միջնադարի հետ: Իսկ երբ Հրանտ Թամրազյանն սկսում էր շարադրել հայ գրաքննադատության պատմությունը, արդեն հասկանալի էր դառնում, որ ոչ մի տարօրինակ անցում էլ չի կատարվել. նա պարզապես կենսական հզոր էներգիա էր ստանում համաշխարհային գլոխգործոց երկերից ու շիկացած գրում: Խորենացու հետ դառնում էր Խորենացի, թափանցում Փավստոսի Պատմության «գաղտնիքների» ու ներքին շերտերի մեջ, մասնակցում պատմիչների խորունկ վեճերին (Խորենացի-Փավստոս, Փարպեցի-Եղիշե) ու մեկնում դրանք, բացահայտում նրանց արձակի յուրահատկություններն ու գեղարվեստական պատկերների գաղտնարանները... Այդպես անդուլորեն աշխատում էր գիտնականը, աշխատում էր Ռաֆֆու կամ Շիրվանզադեի ջանադրությամբ ու գերլարումով՝ չափազանց ուշադիր ու զգայուն յուրաքանչյուր բառի, թող զարմանալի չթվա, անգամ տառի նկատմամբ (ձեռագրերում քանիցս նկատել եմ և շաղկապը փոխված ու-ի կամ, հակառակը): Աստիճանաբար գոյանում էին միջին չափի թղթերով սևագրությունների հսկայական կույտեր, և թվում էր՝ արդեն պատրաստ է երկասիրությունը, երբ նորից ձեռքն էր առնում գրիչը, մկրատն ու սոսինձը և անվերջ փոխում, լրացնում ու տեղափոխում էջերը... Տարիների ընթացքում նա չորս անգամ հիմնովին բարեփոխեց իր կոթողային աշխատանքը և վերջնական կարծիքի տվեց տվյալ բնագավառում անառարկելի հեղինակություն հանդիսացող և շատ հարգված մի միջնադարագետի: Վերջինս անկեղծորեն հավանել էր ու գովեստի խոսքեր ասել... «Եթե հավանել է՝ առանց դիտողության, ուրեմն այնքան էլ լավ չէ», - հանկարծ եզրակացրեց Հրանտ Թամրազյանը ու վերստին ձեռքն առնելով գրիչը՝ ստեղծեց ուսումնասիրության վերջին՝ հինգերորդ տարբերակը և տպագրեց: Արձագանքներն աննախադեպ էին ու անաչառորեն խիստ դրական:

Իմաստուն գիտնականը նույն տքնանքով աշխատում էր անգամ 90-ականների ցուրտ ու մութ տարիներին. հիշողությանս մեջ կենդանի քանդակի պես անջնջելի է մնացել զինվորական բաճկոն հագած ու գլխին մորթե գլխարկ դրած Հրանտ Թամրազյանը, որ, գրասեղանի մոտ նստած, փչելով տաքացնում էր ցրտից ընդարմացող ձեռքերը, երբեմն-երբեմն դադարեցնում ստեղծագործելը և մոտենում վառարանին՝

«Վա՛յ, նանի՛ ջան» մրմնջալով... Հետո նորից անդադրում աշխատանք, համալսարան, ուսանողներ, որոնց շատ էր սիրում գրականագետը և խոստովանում, որ իր գրքերի մեծ մասը ծնվել է լսարաններում:

* * *

Այդպես անցան դարձյալ տարիներ, եկան անհամեմատ լավ օրեր, ծնվեցին գիտական բազմաթիվ ուսումնասիրություններ, բայց նոր դարի ու հազարամյակի սկզբին իրենց օր օրի սկսեցին ավելի շատ զգացնել տալ սրտի մի քանի կաթվածների հետքերը, մտավոր գերլարումի ավերումները: Անհողդողդ գիտնականը, սակայն, անկողին չընկավ: Նա անընդհատ աշխատում էր, միշտ լավատես էր ու չէր վախենում մահից, ավելի ճիշտ՝ փիլիսոփայորեն էր նայում մահվանը: Ուներ միայն մի երազանք, այն է՝ գալիքի մարդիկ իր ժամանակում, իր աշխատանքների մեջ լսեն իր ըմբռնումների ու հոգսերի արձագանքները՝ ձուլված օրերի կախարդիչ մեղեդիներին:

Տնեցիները պատմում են, որ Հրանտ Թամրազյանի մահվան նախընթաց երեկոյին տիկին Լենան (նա ունի հրաշալի ձայն և հատկապես լավ է երգում Կոմիտաս) քնեցնում էր թոռնիկին՝ նրա համար երգելով Ավ. Իսահակյանի «Գետակի վրա թեքվել է ուռին...» բանաստեղծությունը: Երբ կինը երգը վերջացնում է, Հրանտ Թամրազյանը խնդրում է նորից երգել՝ ինքն էլ մեղմ կրկնելով.

Երազ - աշխարհում

Ամեն բան հավետ

Գալիս է, գնում

Ու ցնդում անհետ:

«Բայց մի՞թե մեզանից ոչ մի հուշ և հիշատակ չի մնա...»²³, - հուշերի գրքում հասկանալի տազնապով հարցնում է Հրանտ Թամրազյանը: Մեր սիրելի ուսուցչի ու տաղանդաշատ գիտնականի երկրային կյանքի ավարտից մեկ տասնամյակ անց վստահաբար հավաստիացնում ենք, որ քանի դեռ կա համաաշխարհային գրականության մի կարևորագույն բաղկացուցիչը հանդիսացող հայ գրականությունը, երախտագետ սերունդների կողմից անխուսափելիորեն մշտապես կհիշվի նաև այդ գրականության բացառիկ ուժի մեկնիչի անունը: Իսկ դրա այսօրվա վկայությունը գիտական ներկա ծանրակշիռ քառահատորն է, որի լույսընծայումն իրականացրեց հեղինակի արժանավոր որդին՝ մեր ժամանակների լավագույն միջնադարագետներից մեկը՝ Հրաչյա Թամրազյանը:

ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ

²³ Նույն տեղում, էջ 50: